ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը Ավստրալիայի Միություն

Մելբուրն գործուղման

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Աշոտ Մանուկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ**

   Ավստրալիայի Միություն (Մելբուրն)/ հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ավստրալիայի Վիկտորիա նահանգի զբաղվածության, արդյունաբերության և ռեսուրսների նախարար Ուեյդ Նունան

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն հանքարդյունաբերության և բնական պաշարների հարցերին նվիրված միջազգային համաժողովին (IMARC)

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Համաժողովին ներկայացվել են աշխարհի տարբեր երկրներում հանքարդյունաբերության ոլորտի նվաճումները, ոլորտի կարգավորման և վերահսկողության ժամանակակից մոտեցումները, հանքարդյունաբերության օպտիմալացման և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները, շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման նորագույն լուծումները:

Ներկայացրել եմ Հայաստանում գործող ընդերքի օրենսդրությունը, մեր երկրի ներդրումային միջավայրը, ընդերքօգտագործման ոլորտում լիցենզիաների ու երևակման թույլտվությունների տրամադրման կարգն ու պայմանները, ինչպես նաև ընդերքօգտագործման ոլորտում մեր երկրում իրականացված նորամուծությունները, մասնավորապես, ընդերքի շահագործման լիցենզիաների տրամադրման պայման հանդիսացող հանքի ապագործարկման նախագծի և համապատասխան ֆինանսական երաշխիքների ներդրման անհրաժեշտությունը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Ավստրալիայի բնական պաշարների պետական նախարար և գանձապետ Թիմ Պալլասի հետ հանդիպմանը քննարկվել են Հայաստանի ընդերքի օրենսդրության զարգացման և հանքարդյունաբերության ոլորտում հնարավոր համագործակցության ուղղությունները: Անդրադարձ է կատարվել ոլորտի կարգավորման ստանդարտների, երկրաբանական երևակումների և ընդերքի շահագործման գործնական խնդիրներին «պատասխանատու ընդերքօգտագործման» հիմնարար սկզբունքների համատեքստում:

Քննարկվել են նաև Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը Հայաստանի անդամակցության գործընթացի և Հայաստանի երկրաբանական ֆոնդի արխիվի թվայնացման ու տեղեկությունների հասանելիությանն ուղղված Հայաստանի կառավարության ջանքերը:

Հանքային պաշարների միավորված կոմիտեի (JORC) նախագահ Սթիվ Հանթի հետ քննարկվել են ընդերքի օրենսդրության զարգացման ոլորտի կարգավորման կատարելագործման ուղղությունները:

Հանքարդյունաբերության միջազգային ստանդարտների կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն Ռոբերտ Միլբուրնի հետ հանդիպման ընթացքում կարևորվել են մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության բացասական ազդեցության չեզոքացման խնդիրները:

Համաժողովի շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել նաև Իրանի Իսլամական Հանրապետության արդյունաբերության, հանքերի և առևտրի փոխնախարար Մեհդի Կարբասիանի, GFG Alliance միջազգային կորպորացիայի գործադիր նախագահ Սանջեև Գուպտայի հետ:

Հանքարդյունաբերության և բնական պաշարների տարեկան միջազգային համաժողովին մասնակցել են շուրջ 150 հանքարդյունաբերող ընկերություններ և 3000-ից ավել պատվիրակներ աշխարհի 77 երկրներից:

8. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Շարունակել աշխատանքներն ընդերքօգտագործման բնագավառում միջազգային լավագույն փորձի և օրենսդրության ներդրման ուղղությամբ:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ **ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ**